

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Երևան, մարտ 2016թ.

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորական հաշվետվություն
 - 5 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
 - 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 - 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
 - 8 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 - 9 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
 - 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
-

Կազմակերպական-իրավական ձևը՝	ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	տրամադրել վարկեր, ներգրավել փոխառություններ
Գործադիր տնօրեն՝	Վարդան Հովսեփյան

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՄՊԸ Խորհրդին

Մեր կողմից իրականացվել է “ԷԿԼՕՖ” ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «ԷԿԼՕՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակի, և նույն տարեթվին ավարտված ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ ու իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հանգամանքի լուսարանում

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 13-ի վրա, որը վերաբերում է Ընկերության կողմից էական ընդհանուր մնացորդային արժեքով մեծ ծավալով հաճախորդներին տրված վարկերի դուրս գրմանը:

Այլ հանգամանքներ

Ընկերության՝ 31 դեկտեմբեր 2014թ. ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որն արտահայտել է դրական կարծիք:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն՝

Աուդիտոր՝

Երևան

23 մարտի 2016թ.



Վ. Սահակյան

Ա. Գևորգյան

«ԷԿԼՕՏ» ՈՒՎԿ ՍՊԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2015թ. հազար դրամ	2014թ. հազար դրամ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	221,205	244,757
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	5	(63,118)	(61,606)
Զուտ տոկոսային եկամուտ		158,087	183,151
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		12,118	27,431
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(91)	(399)
Արտարժույթային գործարքներից ստացված գուտ վնաս		(141)	(441)
Այլ գործառնական եկամուտ	6	116,146	50,400
Գործառնական եկամուտ		286,119	260,142
Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ, գուտ	7	(323,146)	(70,570)
Անձնակազմի գծով ծախսեր	8	(87,866)	(76,799)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(38,286)	(30,342)
Այլ ծախսեր	10	(11,285)	(7,561)
Շահույթ մինչև հարկվելը		(174,464)	74,870
Շահութահարկի գծով ծախս	11	31,925	(14,974)
Շահույթ հարկումից հետո		(142,539)	59,896
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(142,539)	59,986



Գործադիր տնօրեն
Վարդան Հովսեփյան





Գլխավոր հաշվապահ
Կարինե Պապուջյան

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	31.12.2015թ. հազար դրամ	31.12.2014թ. հազար դրամ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	23	5,570	2,682
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	12	453,569	173,277
Հաճախորդներին տրված վարկեր	13	589,389	1,258,660
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	19,713	10,051
Հետաձգված հարկային ակտիվ	15	35,833	3,907
Ստացվելիք տոկոսներ		19,856	29,638
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	16	21,447	11,601
Այլ ակտիվներ	17	27,159	33,183
Ընդամենը ակտիվներ		1,172,536	1,522,998
Պարտավորություններ			
Ներգրավված փոխառություններ	18	623,628	804,136
Վճարվելիք տոկոսներ		10,814	11,498
Այլ պարտավորություններ	19	45,147	71,878
		679,589	887,512
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	20	575,590	575,590
Գլխավոր պահուստ		-	-
Կուտակված շահույթ/ (վնաս)		(82,643)	59,896
		492,947	635,486
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		1,172,536	1,522,998


 Գործադիր տնօրեն
 Վարդան Հովսեփյան




 Գլխավոր հաշվապահ
 Կարինե Պապուջյան

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2015թ. հազար դրամ	2014թ. հազար դրամ
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ստացված տոկոսներ	174,574	213,170
Վճարված տոկոսներ	(59,965)	(57,760)
Կորուստների վերականգնում	62,038	59,373
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	8,855	27,732
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(57,789)	(56,773)
Վճարված հարկեր, տուրքեր	(43,162)	(48,520)
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	135,391	(194,149)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	<u>(37,637)</u>	<u>(45,376)</u>
<i>Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<u>182,305</u>	<u>(102,303)</u>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(4,422)	(11,189)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	<u>-</u>	<u>(11,189)</u>
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վճարված շահաբաժիններ	-	(34,045)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	(174,844)	147,483
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	<u>(174,844)</u>	<u>113,438</u>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(123)	(13)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/ (նվազում)	2,916	(67)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	2,710	2,777
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում (տես՝ ծանոթ. 23)	<u>5,626</u>	<u>2,710</u>

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ հազար դրամ	Գլխավոր պահուստ հազար դրամ	Զբաղիված շահույթ/ Կուտակված վնաս հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
01.01.2015թ. դրությամբ	575,590	-	59,896	635,486
Բաժնետերերի հետ գործարքներ	-	-	-	-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում				
Շահաբաժին	-	-	-	-
Համապարփակ եկամուտ				
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	(142,539)	(142,539)
31.12.2015թ. դրությամբ	575,590	-	(82,643)	492,947
01.01.2014թ. դրությամբ	538,379	-	71,256	609,635
Բաժնետերերի հետ գործարքներ				
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	37,211	-	(37,211)	-
Շահաբաժին	-	-	(34,045)	(34,045)
Համապարփակ եկամուտ				
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	59,896	59,896
31.12.2014թ. դրությամբ	575,590	-	59,896	635,486

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1.	Ընկերության վերաբերյալ	10
2.	Պատրաստման հիմունքներ	10
3.	Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ	19
4.	Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում	20
5.	Զուտ տոկոսային եկամուտ	29
6.	Այլ գործառնական եկամուտ	29
7.	Վարկերից և այլ ակտիվներից առաջացած կորուստներ	30
8.	Անձնակազմի գծով ծախսեր	30
9.	Վարչական ծախսեր	30
10.	Այլ ծախսեր	30
11.	Շահութահարկի գծով ծախս	31
12.	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	31
13.	Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	32
14.	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	34
15.	Հետաձգված հարկային ակտիվ	35
16.	Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	35
17.	Այլ ակտիվներ	36
18.	Ներգրավված փոխառություններ	37
19.	Այլ պարտավորություններ	38
20.	Կանոնադրական կապիտալ	38
21.	Կապակցված կողմերի միջև գործարքներ	38
22.	Պայմանական պարտավորություններ	39
23.	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ	40
24.	Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ	40
25.	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	40
26.	Իրական արժեքի չափման բացահայտումներ	47

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

1. Ընկերության վերաբերյալ

«ԷԿԼՕՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2006 թվականին: Ընկերության գործունեության հիմնական նպատակն է խոցելի սոցիալական հասարակության անդամների նվազման նպատակով և գյուղական վայրերում կայուն եկամուտների ապահովման նպատակով միկրովարկերի տրամադրում և այդ գործունեությունը զարգացնելու համար փոխառությունների ներգրավումը:

Ընկերության մասնակիցներն են.

Մասնակից	Բաժնեմաս (%)
ԷԿԼՕՖ Հիմնադրամ	72.8
ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	27.2
Ընդամենը	100.0

Ընկերության հիմնական ֆինանսավորման աղբյուրը բաժնետերերից ստացված փոխառություններն են:

Ընկերությունը ՀՀ տարածքում ունի չորս ներկայացուցչություն սպասարկելու հետևյալ տարածաշրջանները.

Մարզ	Քաղաք
1. Արմավիրի մարզ,	ք. Էջմիածին
2. Լոռու մարզ,	ք. Ստեփանավան
3. Գեղարքունիքի մարզ,	ք. Վարդենիս
4. Վայոց Ձորի մարզ,	ք. Եղեգնաձոր

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է ՀՀ, Արմավիրի մարզի, Էջմիածին քաղաքի Բաղրամյան 2/1 հասցեում:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալներով կազմել է 29 մարդ (2014թ.՝ 36 մարդ):

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ծանոթագրություն 25-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա՝ բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2015թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

2015թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո ընկած ժամանակահատվածում առաջին անգամ ուժի մեջ մտած նոր ստանդարտներ կամ մեկնաբանություններ չկան: Տվյալ ամսաթվից ուժի մեջ մտած ոչ մի փոփոխություն, որ կատարվել է ստանդարտներում, էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

բ) Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Հետևյալ նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել և վաղաժամկետ չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվություններում, կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Ընկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
1	ՖՀՄՍ 5 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ Տարեկան բարելավումներ (2012-2014թթ.)	Փոփոխությունը պարզաբանում է, որ վաճառքի համար պահվող ակտիվները կամ օտարման խմբերը սեփականատերերին բաշխելու համար պահվող ակտիվների կամ օտարման խմբերի վերադասակարգելը (կամ հակառակը) համարվում է օտարման նախնական պլանի շարունակություն: Վերադասակարգման մասով գործում են ՖՀՄՍ 5 ստանդարտի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Եթե ակտիվն այլևս չի դասակարգվում որպես սեփականատերերին բաշխելու համար պահվող ակտիվ, ապա կիրառվում են ՖՀՄՍ 5 ստանդարտի այն պահանջները, որոնք գործում են այլևս որպես վաճառքի համար պահվող ակտիվներ չդասակարգվող ակտիվների համար:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Ընկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
2	ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ Տարեկան բարելավումներ (2012-2014թթ.)	Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհուրդը պարզաբանել է այն հանգամանքները, որոնց դեպքում կազմակերպությունը շարունակում է ներգրավված լինել փոխանցած ակտիվի շահագործման մեջ: ՖՀՄՍ 7-ում կատարված հետագա փոփոխությունը պարզաբանում է, որ 2011թ.-ի դեկտեմբերին հրապարակված «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում» փոփոխության (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ) կիրառումը պարտադիր բնույթ չի կրում բոլոր միջանկյալ ժամանակահատվածների համար:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում
3	ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ (2014թ.)	ՖՀՄՍ 9 <i>Ֆինանսական գործիքներ</i> (2014թ.) ստանդարտը ներառում է ֆինանսական գործիքների ծրագրերի բոլոր երեք փուլերի (դասակարգում ու չափում, արժեզրկում և հեջի հաշվառում) մասին վերջնական պահանջները:	2018թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2018թ. հունվար	Ազդեցությունը դեռևս պետք է ճշգրտվի
4	ՖՀՄՍ 10 Համախմբված ֆինանսական հաշվետվություններ	Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես հաշվառել այն դեպքը, երբ մայր կազմակերպությունը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ (ինչը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նախատեսված է ՖՀՄՍ 3 <i>Ձեռնարկատիրական</i>	Պարտադիր ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է անորոշ	Կիրառման ամսաթիվը հետաձգվել է անորոշ ժամանակով	Ազդեցություն չի նախատեսվում

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Շնկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
		գործունեության միավորումներ ստանդարտով՝ դուստր կազմակերպության իր բաժնեմասը ամբողջությամբ կամ մասամբ վաճառելով բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությանը կամ համատեղ ձեռնարկմանը:	ժամանակով		
5	Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում, 12-ում և ՀՀՄՍ 28-ում	Փոփոխությունները պարզաբանում են ՖՀՄՍ 10-ի (Համախմբված ֆինանսական հաշվետվություններ), ՖՀՄՍ 12-ի (Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում) և ՀՀՄՍ 28-ի (Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում) մի շարք ասպեկտներ կապված ներդրումային ընկերությունների մասով բացառությունների հետ:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում
6	Փոփոխություններ ՖՀՄՍ 11-ում՝ Համատեղ պայմանավորվածություններ	Համաձայն փոփոխությունների՝ համատեղ գործունեությունում բաժնեմասեր ձեռք բերելիս (երբ ձեռքբերումը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեություն՝ ըստ ՖՀՄՍ 3-ի)՝ կազմակերպությունը պետք է կիրառի ՖՀՄՍ 3 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ ստանդարտի բոլոր սկզբունքները:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Ընկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
7	ՖՀՄՍ 14 Հետաձգված սակագնային կարգավորումների հաշիվներ	Շատ երկրներում տնտեսության ճյուղերը (այդ թվում՝ կոմունալ ծառայությունները, որոնցից են գազը, էլեկտրաէներգիան և ջուրը) ենթակա են սակագնային կարգավորման այն դեպքերում, երբ կառավարությունն է կարգավորում մատակարարումը և գնագոյացումը: Սա կարող է զգալի ազդեցություն ունենալ կազմակերպության հասույթի չափի և դրա ստացման ժամկետների վրա: Տվյալ ստանդարտի գործողության ոլորտը սահմանափակվում է ՖՀՄՍ առաջին անգամ ընդունող կազմակերպություններով, որոնք իրենց ֆինանսական հաշվետվություններում ճանաչել են հետաձգված սակագնային կարգավորումների հաշիվների հաշվեկշիռը՝ իրենց նախորդ Համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների (GAAP) համաձայն:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Հետաձգված հաշիվներ չկան, ազդեցություն չի նախատեսվում
8	ՖՀՄՍ 15 Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ	ՖՀՄՍ 15 ստանդարտի նպատակն է հստակեցնել հասույթի հաշվառման սկզբունքները: Սա ներառում է անհամապատասխանությունների ու հայտնաբերված թերությունների վերացումը և ընկերությունների, տնտեսության ճյուղերի և կապիտալի շուկաների շրջանում հասույթի հաշվառման գործընթացների համադրելիության բարելավումը: Այսպիսով, ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է հասույթի հաշվառման միասնական համակարգ:	2018թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2018թ. հունվար	Ազդեցությունը պետք է պարզաբանվի

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Ընկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
9	ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում	ՀՀՄՍ 1 (Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում) ստանդարտի փոփոխությունները ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվություններում բացահայտման հետ կապված պահանջների բարելավմանն ուղղված գլխավոր նախաձեռնության մաս են կազմում:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Կպահանջվեն լրացուցիչ պարզաբանումներ
10	ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցներ	Ավելացվել է 62Ա պարագրաֆը, որով արգելվում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման համար կիրառել հասույթի վրա հիմնված մեթոդներ: 62Ա պարագրաֆը պարզաբանում է, որ սա պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմնական միջոցների օգտագործումը ներառող գործունեության արդյունքում գեներացված հասույթը հիմնական միջոցի տնտեսական օգուտի օգտագործումից բացի սովորաբար արտացոլում է այլ գործոններ:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Հասույթի վրա հիմնված մաշվածություն չկա, որնիցե ազդեցություն չի նախատեսվում
11	ՀՀՄՍ 19 Աշխատակիցների հատուցումներ	ՀՀՄՍ 19-ի ուղեցույցը հստակեցվել է, և համաձայն այդ ուղեցույցի՝ աշխատակիցների հատուցումների հաշվառման համար զեղչման դրույք սահմանող կորպորատիվ պարտատուներն ու աշխատակիցներին վճարվելիք հատուցումները պետք է արտահայտված լինեն միևնույն արժույթով:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Աշխատակիցների հատուցումներ չկան, ազդեցություն չկա

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Ընկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
12	ՀՀՄՍ 27 Առանձին ֆինանսական հաշվետվություններ	Փոփոխությունները ներկայացնում են դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումները կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվություններում բաժնեմասնակցության մեթոդով հաշվառելու տարբերակը:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում
13	ՀՀՄՍ 34 Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ	ՀՀՄՍ 34-ի 16Ա պարագրաֆով նախատեսված են լրացուցիչ բացահայտումներ, որոնք պետք է ներկայացվեն -միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, կամ -միջանկյալ ֆինանսական հաշվետվության որևէ այլ հատվածում:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում
14	ՀՀՄՍ 38 Ոչ նյութական ակտիվներ	Փոփոխությունները պարզաբանում են այն անհերքելի ենթադրությունը, համաձայն որի՝ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան հասույթի հիման վրա հաշվարկելը նպատակահարմար չէ:	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում
15	ՀՀՄՍ 41 Գյուղատնտեսություն	Տվյալ փոփոխություններով ՀՀՄՍ 16 <i>Հիմնական միջոցներ</i> ստանդարտի գործողության ոլորտը ընդլայնվում է և ներառում բերքատու բույսերը վերջիններիս սահմանելով	2016թ. հունվար Ավելի վաղ կիրառումը	2016թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Ընկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
		որպես կենդանի բույսեր, - որոնք օգտագործվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրական գործընթացում, - որոնցից ակնկալվում է ստանալ արտադրանք մեկից ավելի ժամանակաշրջանների ընթացքում, և -վաճառքը քիչ հավանական է (բացառությամբ պատահական վաճառքների):	թույլատրելի է		

ՖՀՄՍ 15 (Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ) և ՖՀՄՍ 9 (Ֆինանսական գործիքներ) ստանդարտների ազդեցությունը դեռևս գնահատման փուլում է գտնվում, քանի որ տվյալ նոր ստանդարտները կարող են զգալի ազդեցություն ունենալ Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում

Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Ընկերության վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու նպատակով: Ընկերությունը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող հատկացումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Ընկերության կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Ընկերությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա: 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերը և պահուստը ներկայացված են ծանոթագրություն 13-ում:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի էլակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող էլակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի էլակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3. Ոչ դիտելի էլակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Վարկային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Հաճախորդներին տրված վարկեր
- Դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- ՀՀ բանկերում տեղաբաշխված ավանդներ
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
- Հաստատուն և լողացող տոկոսադրույքով ստացված փոխառություններ

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական ակտիվներ

	Վարկեր և դեբիտորական պարտքեր	
	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	605,725	1,287,088
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,488	936
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,570	2,710
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	457,089	174,486
	1,069,872	1,465,220

Ֆինանսական պարտավորություններ

	Ֆինանսական պարտավորություններ	
	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Փոխառություններ և վարկեր	634,442	815,696
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,336	9,064
	638,778	824,760

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև ստացված վարկերը և փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ծանոթագրություն 26-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսական կազմակերպությունների (ՄՖԿ) ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Միկրոֆինանսավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է վարկային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և վարկային կազմակերպության Տնօրենների խորհրդի կողմից:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը վարկային մասնագետի կողմից հաճախորդի նախնական հայտի, նրա բիզնեսի և վարկային ռիսկերի պատշաճ ուսումնասիրության հիման վրա կատարված նախնական վերլուծական տեղեկություններ են, որոնց ճշգրտությունը համեմատական եղանակով ստուգում է նաև վարկային կառավարիչը, վարկային մասնագետի և վարկային կառավարիչի պատասխանատվությամբ: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Ռիսկերի կառավարիչը կոչված է բացահայտելու գործառնական, վարկային, պրոդուկտային ռիսկերի բացահայտման համար: Ներքին աուդիտը իրականացնում է ներկայացուցչությունների և Ընկերության վարկային գործընթացների կանոնավոր աուդիտներ:

Ընկերության վարկերի տրամադրման և սպասարկման ընթացակարգի համաձայն վարկային մասնագետները, գործառնական բաժինը, անվտանգությունը համապատասխանաբար ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ուշացված մնացորդներին: Գործադիր տնօրենի վերահսկողությամբ իրականացվում է ժամկետանց վարկերի հետ աշխատանքների կազմակերպումը:

Ընկերության բոլոր վարկերը ապահովված են վարկառուների և/կամ այլ անձանց անձնական երաշխավորություններով: Բացի այդ ըստ նպատակահարմարության, և վարկերի չափերից ելնելով, որպես դրանց ապահովման միջոց Ընկերությունն ընդունում է գրավ: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասն անհատներին տրված փոքր գումարներով վարկեր են, որտեղ այսպիսի ապահովության միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

Վերանայված պայմաններով վարկեր

Վերանայված պայմաններով վարկերն իրենցից ներկայացնում են վարկեր, որոնք վերակառուցվել են՝ վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում, և Ընկերությունը կատարել է զիջումներ, որոնք այլապես չէր դիտարկվի: Վարկի վերակառուցման դեպքում այն մնում է այդ խմբում անկախ նրանից, որ վերակառուցումից հետո դրա կատարողականը եղել է բավարար:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Հաճախորդին տրված վարկեր, առանց արժեզրկման պահուստի մասհանումների	10,442	9,515

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Արժեզրկման պահուստ

Ընկերությունը սահմանում է պահուստ արժեզրկումից կորուստների գծով, որն իրենից ներկայացնում է վարկային պորտֆելում կրած վնասների գնահատումը: Այս պահուստի հիմնական բաղկացուցիչը իրենից ներկայացնում է վարկերի գծով կորուստների խմբակային պահուստ, որը սահմանված է Ընկերության համասեռ ակտիվների գծով՝ կապված այն վնասների հետ, որոնք հաշվեգրվել են, սակայն չեն վերագրվել վարկերին:

Վարկային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է և անհատական ռիսկերից, և ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

Վերոնշյալ հաշվեկշռային արժեքները լավագույն կերպով ներկայացնում են վարկային ռիսկի առավելագույն չափը՝ նաև հաշվի առնելով ձեռք բերված ապահովության միջոցները կամ անձնական երաշխիքները: Վարկային ռիսկի ենթարկվածությունը կրճատելու նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր գուման ազդեցությունն էական չէ: Հաճախորդներին տրված վարկերի գծով հաճախորդներին տրված վարկերի վերլուծությունը և վարկային ռիսկի համակենտրոնացումը հաճախորդներին տրված վարկերի գծով ներկայացված է ծանոթագրություն 13- ում:

Հետհաշվեկշռային ռիսկ

Ընկերությունը սկզբունքայնորեն կիրառում է միևնույն ռիսկերի կառավարման քաղաքականությունը հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչը կիրառում է հաշվեկշռային ռիսկերի համար:

Աշխարհագրական կենտրոնացում

Ընկերության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության տարածքով:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետայնության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ծանոթագրություն 13-ում:

Դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ծանոթագրություն 16-ում:

Դրամական միջոցներ բանկում և կարճաժամկետ ավանդներ

Ընկերությունը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ընկերության կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունները վստահելի են և հեղինակավոր:

Զգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Բանկ 1	203,672	67,300
Բանկ 2	258,668	109,896
Այլ	319	-
	<u>462,659</u>	<u>177,196</u>

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է՝ տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Ընկերության ղեկավարությունը իրականացնում է Ընկերության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիտորինգ, գնահատում է Ընկերության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունն Ընկերության շահութաբերության վրա:

Զգայունության վերլուծություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ոչ ածանցյալ գործիքների գծով տոկոսադրույքի ռիսկը:

Լողացող տոկոսադրույքով պարտավորությունների համար, վերլուծությունները պատրաստվել են՝ ենթադրելով, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված պարտավորության գումարն այդպիսին է եղել ամբողջ տարվա ընթացքում: Հիմնական ղեկավար անձնակազմին տոկոսադրույքի ռիսկի փոփոխությունը ներկայացնելիս օգտագործվում է 200 բազիսային կետով աճ կամ նվազում, և ներկայացնում է ղեկավարության գնահատականը՝ տոկոսադրույքի գծով հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:

Եթե տոկոսադրույքները լինեին 200 բազային կետով ավելի բարձր կամ ցածր, և բոլոր մնացած փոփոխականները լինեին հաստատուն, ապա Ընկերության արդյունքը և գուտ ակտիվները 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կնվազեր/կաճեր 1,058 հազար ՀՀ դրամի չափով (2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 1,595 հազար ՀՀ դրամի չափով):

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված են վերջիններիս գործառնական արժույթից տարբեր արժույթով:

Ընկերության արտարժույթային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի հետ կապված փոխարժեքային փոփոխություններից, ինչի արդյունքում Ընկերությունը կարող է կրել նշանակալի վնասներ: Այս ռիսկն, ըստ էության, Ընկերության կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին ներկայացված է ստորև՝

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ֆինանսական ակտիվներ/(պարտավորություններ) արտարժույթով	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Զուտ դիրք	18,850	10,021

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների՝ ՀՀ դրամով չափման համար Ընկերությունը կիրառել է նույն ամսաթվին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքը՝ 483.75 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց (31.12.2014թ. դրությամբ՝ 474.97 դրամ մեկ ԱՄՆ դոլար դիմաց): Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլար 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքները վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնեք տարվա շահույթի (հարկումից հետո) և գուտ ակտիվների ավելագումանը՝ 1,805 հազար դրամի չափով (2014թ.՝ 947 հազար դրամի չափով), իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և գուտ ակտիվների աճին՝ նույն չափով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի առնվազն 45 օրվա ընթացքում կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Ընկերությունը նաև փորձում է նվազեցնել իրացվելիության ռիսկը՝ հաստատուն դարձնելով իր երկարաժամկետ փոխառությունների տոկոսադրույթները (հետևաբար և դրամական միջոցների հոսքերը). վերջիններիս մասին ներկայացվել է «Տոկոսադրույթային ռիսկ» բաժնում:

Ընկերության իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության գանձապետական գործառնության միջոցով: Ցանկացած գործառնության համար Ընկերության կողմից նախատեսվում են համապատասխան միջոցներ, որոնց գումարը կախված է բյուջեից: Բյուջեն հաստատվում է Խորհրդի կողմից՝ այսպիսով հնարավոր դարձնելով դրամական միջոցների գծով Ընկերության կարիքների կանխատեսումը: Երբ գումարը գերազանցում է որոշակի սահմանաչափը, անհրաժեշտ է ստանալ նաև Խորհրդի հաստատումը:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 տարի հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Վարկեր և փոխառություններ	10,814	170,305	78,350	100,767	411,272
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	4,336	-	-	-
	10,814	174,641	78,350	100,767	411,272

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
